ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ անդամների ընդհանուր ժողովի
25/07/2014թ թիվ 4-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ անդամների ընդհանուր ժողովի նախագահ

---------- Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

«20» օգոստոսի 2014թ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

---------- Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-035

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(««ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՅՈՒՐՈ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ)

ԵՐԵՎԱՆ - 2014

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով սահմանվում են «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության (այսուհետ՝ Բյուրո) անդամ ապահովագրական ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություն) կողմից Բյուրո ներկայացվող հաշվետվությունների ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգն ու ժամկետները և այդ հաշվետվությունների լրացման հրահանգը:

2. Ընկերությունները Բյուրո են ներկայացնում ԱՊՊԱ ոլորտում իրականացված գործառնությունների մասին հաշվետվություն (ԱՊՊԱ-01 հաշվետվություն):

3. Ընկերությունները ԱՊՊԱ-01 հաշվետվությունը Բյուրո են ներկայացնում ամսական կտրվածքով՝ հաշվետվության մեջ ներառելով հաշվետու ժամանակահատվածի ամբողջ տվյալները, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով: Ընդ որում սույն կանոնների իմաստով հաշվետու ժամանակահատված է համարվում հաշվետու ամիսը ներառող տարվա հունվարի 1-ից մինչև հաշվետու ամսվա վերջին օրը ընկած ժամանակահատվածը:

4. ԱՊՊԱ-01 հաշվետվությունը ներկայացվում է Ձև 1-ով սահմանված ձևին համապատասխան:

5. Հաշվետվությունը Բյուրո է ներկայացվում «xls» կամ «xlsx» ձևաչափով՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ համակարգից օգտվելու անհնարինության դեպքում՝ հիշողության էլեկտրոնային կրիչով, ընդ որում ներկայացվող ֆայլերի անունները պետք կազմված լինեն հետևյալ սկզբունքով՝ «APPA01XXYYMM», որտեղ՝ XX-ը ապահովագրական ընկերության ԱՊՊԱ վկայագրերի սերիան է, YY-ը՝ հաշվետու տարին (երկուական սինվոլով), MM-ը՝ հաշվետու ամիսը (երկուական սինվոլով):

6. Ամսական հաշվետվությունը Բյուրո է ներկայացվում հաշվետու ամսվա վերջին օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

7. Հաշվետվությունը համարվում է ներկայացված և ընդունված, եթե այն ներկայացվել է սույն կանոններով սահմանված կարգով և ձևով և դրա էլեկտրոնային տարբերակը չունի ծրագրային կամ այլ տեխնիկական թերություն: Թերությունների առկայության դեպքում Բյուրոն այդ մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է հաշվետվությունն ուղարկած Ընկերությանը:

8. Ստացված հաշվետվություններում ներառված տվյալների հիման վրա Բյուրոն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է համապատասխան վիճակագրական տեղեկատվություն՝ յուրաքանչյուր Ընկերության գծով և ԱՊՊԱ ոլորտի վերաբերյալ ընդհանրական տեղեկատվության ձևով:

ԳԼՈՒԽ 2.

ԱՊՊԱ-01 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

9. Հաշվետվության «Հաշվետվություն ներկայացնող ապահովագրական ընկերություն» տողում լրացվում է հաշվետվությունը ներկայացնող Ընկերության անվանումը:

10. Հաշվետվության «Հաշվետու ժամանակահատված» տողում լրացվում է հաշվետու ամիսը ներառող տարվա հունվարի 1-ը՝ որպես հաշվետու ժամանակահատվածի սկիզբ և հաշվետու ամսվա վերջին օրը:

11. Հաշվետվության 1-ին սյունակում լրացվում է Ընկերության կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրերի քանակը՝ անկախ այդ պայմանագրի ուժի մեջ մտնելու հանգամանքից:

12. Հաշվետվության 2-րդ սյունակում լրացվում է այն ավտոտրանսպորտային միջոցների քանակը, որոնց վերաբերյալ Ընկերության կողմից կնքվել է ԱՊՊԱ պայմանագիր՝ անկախ այդ պայմանագրի ուժի մեջ մտնելու հանգամանքից, ներառյալ այն ավտոտրանսպորտային միջոցների քանակը, որոնց օգտագործումից բխող պատասխանատվությունը ապահովագրվել է նախկինում կնքված ԱՊՊԱ պայմանագրում լրացում կատարելու միջոցով:

13. 3-րդ սյունակում լրացվում է այն ավտոտրանսպորտային միջոցների քանակի վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց վերաբերյալ ***հաշվետու ամսվա վերջին օրվա որևէ պահի դրությամբ*** առկա է գործող ԱՊՊԱ պայմանագիր:

14. 4-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրերի քանակը, որոնք ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակահատվածում:

15. 5-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրերի գծով հավաքագրված և հավաքագրվելիք (անկախ ապահովագրավճարների վճարման համար նախատեսված ժամկետից և Ընկերության կողմից այդ ապահովագրավճարների վաստակած լինելու հանգամանքից) ապահովագրավճարների մեծությունը:

16. 6-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը:

17. 7-րդ սյունակում լրացվում են ԱՊՊԱ պայմանագրի դադարեցման (վաղաժամկետ դադարեցման) արդյունքում Ընկերության կողմից այդ պայմանագրերի գծով ապահովադրին վերադարձրած կամ վերադարձման ենթակա ապահովագրավճարների մեծությունները:

18. 8-րդ սյունակում լրացվում է տեղի ունեցած և Ընկերության կողմից գրանցված ապահովագրական պատահարների քանակը, ընդ որում միևնույն պատահարի վերաբերյալ Ընկերության կողմից մի քանի անձից ստացված հաղորդումները ներկայացվում են մեկ անգամ:

19. 9-րդ սյունակում լրացվում է ապահովագրական հատուցում ստանալու համար տուժողի կողմից Ընկերությանը ներկայացված դիմումների քանակը՝ անկախ դիմումին կից համապատասխան փաստաթղթերի ներկայացման փաստից:

20. 10-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից բավարարված և տուժողին (նրա իրավահաջորդին) վճարված տուժողների առողջությանը պատճառված վնասների հատուցման դիմումների (ներառյալ տուժողի մահվան հետ կապված հատուցման դիմումները) քանակը:

21. 11-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից բավարարված և տուժողին (նրա իրավահաջորդին) վճարված տուժողների առողջությանը պատճառված վնասների հատուցման դիմումների (ներառյալ տուժողի մահվան հետ կապված հատուցման դիմումները) ընդհանուր գումարի մեծությունը:

22. 12-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից բավարարված և տուժողին (նրա իրավահաջորդին) վճարված տուժողի գույքին պատճառված վնասների հետ կապված հատուցման դիմումների քանակը:

23. 13-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից բավարարված և տուժողին (նրա իրավահաջորդին) վճարված տուժողի գույքին պատճառված վնասների հետ կապված հատուցման դիմումների ընդհանուր գումարի մեծությունը:

24. 14-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից բավարարված և տուժողին (նրա իրավահաջորդին) վճարված տուժողի մահվան հետ կապված հատուցման դիմումների քանակը:

25. 15-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից բավարարված և տուժողին (նրա իրավահաջորդին) վճարված տուժողի մահվան հետ կապված հատուցման դիմումների ընդհանուր գումարի մեծությունը:

26. 16-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից բավարարված սակայն դեռևս տուժողին (նրա իրավահաջորդին) չվճարված տուժողների առողջությանը պատճառված վնասների հատուցման դիմումների (ներառյալ տուժողի մահվան հետ կապված հատուցման դիմումները) քանակը:

27. 17-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից բավարարված սակայն դեռևս տուժողին (նրա իրավահաջորդին) չվճարված տուժողների առողջությանը պատճառված վնասների հատուցման դիմումների (ներառյալ տուժողի մահվան հետ կապված հատուցման դիմումները) ընդհանուր գումարի մեծությունը:

28. 18-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից բավարարված սակայն դեռևս տուժողին (նրա իրավահաջորդին) չվճարված տուժողի գույքին պատճառված վնասների հետ կապված հատուցման դիմումների քանակը:

29. 19-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից բավարարված սակայն դեռևս տուժողին (նրա իրավահաջորդին) չվճարված տուժողի գույքին պատճառված վնասների հետ կապված հատուցման դիմումների ընդհանուր գումարի մեծությունը:

30. 20-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից բավարարված սակայն դեռևս տուժողին (նրա իրավահաջորդին) չվճարված տուժողի մահվան հետ կապված հատուցման դիմումների քանակը:

31. 21-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից բավարարված սակայն դեռևս տուժողին (նրա իրավահաջորդին) չվճարված տուժողի մահվան հետ կապված հատուցման դիմումների ընդհանուր գումարի մեծությունը:

32. 22-րդ սյունակում լրացվում է Ընկերությանը ներկայացված՝ մեկ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող վնասի գծով հատուցումից ամբողջությամբ հրաժարվելու մասին դիմումների քանակը:

33. 23-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից տուժողների առողջությանը պատճառված (ներառյալ տուժողի մահվան հետ կապված) վնասների հատուցման մերժված դիմումների քանակը:

34. 24-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից տուժողի գույքին պատճառված վնասների հետ կապված հատուցման մերժված դիմումների քանակը:

35. 25-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից տուժողի մահվան հետ կապված հատուցման մերժված դիմումների քանակը:

36. 26-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից չկարգավորված դիմումների գծով կատարված կանխավճարների քանակը:

37. 27-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից չկարգավորված դիմումների գծով կատարված կանխավճարների ընդհանուր գումարի մեծությունը:

38. 28-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից ստացված դիմումների քանակը, որոնց գծով կատարված հատուցումները հետադարձ պահանջի արդյունքում մասնակի կամ ամբողջությամբ հետ են վերադարձվել:

39. 29-րդ սյունակում լրացվում է Ընկերության կողմից հետադարձ պահանջի արդյունքում մասնակի կամ ամբողջությամբ հետ վերադարձված հատուցումների ընդհանուր գումարի չափը:

40. 30-րդ սյունակում լրացվում է ***հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ*** ԱՊՊԱ պայմանագրերի գծով Ընկերության կողմից ձևավորված՝ չվաստակած ապահովագրավճարների պահուստի (ՉԱՊ) ընդհանուր գումարի մեծությունը:

41. 31-րդ սյունակում լրացվում է ***հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ*** ԱՊՊԱ պայմանագրերի գծով Ընկերության կողմից ձևավորված՝ տեղի ունեցած, սակայն ապահովագրողին դեռևս չներկայացված պահանջների պահուստի (ՏՉՊՊ) ընդհանուր գումարի մեծությունը:

42. 32-րդ սյունակում լրացվում է ***հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ*** ԱՊՊԱ պայմանագրերի գծով Ընկերության կողմից ձևավորված՝ հատուցում ստանալու համար Ընկերությանը ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստի (ՆՉՊՊ) ընդհանուր գումարի մեծությունը:

43. 33-րդ սյունակում լրացվում է Բյուրոյի խորհրդի կողմից հաստատված ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական հատուցումների կարգավորման գծով հաշվեգրված ծախսերի հաշվարկի մեթոդաբանական ուղեցույցին համապատասխան հաշվարկված մեծությունը, իսկ մինչև այդ ուղեցույցի հաստատումը՝ Ընկերության կողմից ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական հատուցումների գործընթացում պատվիրակված վնասի գնահատման և պատահարի առաջացման պատճառների փորձաքննության գծով հաշվեգրված ծախսերի ընդհանուր մեծությունը:

Ձև 1

«««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ անդամ ապահովագրական ընկերությունների կողմից Բյուրո ներկայացվող հաշվետվությունների ձևերի, բովանդակության, ներկայացման կարգի ու ժամկետների և լրացման հրահանգի» կանոնների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՊՊԱ-01

Հաշվետվություն ներկայացնող ապահովագրական ընկերություն՝ _____

Հաշվետու ժամանակահատված՝ _____ - _____
(օօ աա տտ) (օօ աա տտ)

Կնքված ԱՊՊԱ պայմանագրերի քանակ	Տ/Մ-ների քանակ, որոնց վերաբերյալ կնքվել է ԱՊՊԱ պայմանագիր	Տ/Մ-ների քանակ, որոնց վերաբերյալ հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ առկա է գործող ԱՊՊԱ պայմանագիր	ԱՊՊԱ պայմանագրերի քանակ, որոնք ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակահատվածի ընթացքում	Հավաքագրված և հավաքագրվելիք ապ. վճարներ (հազ. դրամ)	Հաշվեգրված ապ. վճարներ (հազ. դրամ)	Վերադարձված կամ վերադարձման ենթակա ապ. վճարների չափ (հազ. դրամ)	Գրանցված պատահարների քանակ	Հատուցում ստանալու համար ներկայացված դիմումների քանակ	Կարգավորված դիմումներ													Չկարգավորված դիմումների գծով տրված կանխավճարներ		Դիմումներ, որոնց գծով կատարված հատուցումները մասնակի կամ ամբողջությամբ հետ են վերադարձվել հետադարձ պահանջի արդյունքում		ՉԱՊ-ի ընդհանուր գումարի չափ հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ (հազ. դրամ)	ՏՉՊՊ-ի ընդհանուր գումարի չափ հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ (հազ. դրամ)	ՆՉՊՊ-ի ընդհանուր գումարի չափ հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ (հազ. դրամ)	Ապ. հատուցումների կարգավորման նպատակով կատարված ուղղակի ծախսեր (հազ. դրամ)
									Բավարարված և վճարված						Բավարարված, սակայն դեռևս չվճարված						Հատուցումից հրաժարվելու մասին դիմումների քանակ	Մերժված դիմումների քանակ											
									Անձնական (մահվան դեպքերի վերաբերյալ դիմումները ներառյալ)		Գույքային		Մահ		Անձնական (մահվան դեպքերի վերաբերյալ դիմումները ներառյալ)		Գույքային		Մահ			Անձնական (մահվան դեպքերի վերաբերյալ դիմումները ներառյալ)	Գույքային	Մահ	քանակ	գումարի չափ (հազար դրամ)	քանակ	գումարի չափ (հազար դրամ)					
									Քանակ	Ընդհանուր գումարի չափ (հազ. դրամ)	Քանակ	Ընդհանուր գումարի չափ (հազ. դրամ)	Քանակ	Ընդհանուր գումարի չափ (հազ. դրամ)	Քանակ	Ընդհանուր գումարի չափ (հազ. դրամ)	Քանակ	Ընդհանուր գումարի չափ (հազ. դրամ)	Քանակ	Ընդհանուր գումարի չափ (հազ. դրամ)												
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33